ՄՇԱԿՈՒՅԹ

ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Կերպարվեստի ամբիոնի հայցորդ
Էլհասցե՝ avetisyan.gagik.93@mail.ru

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ՏԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ

Ամփոփում

Յուրաքանչյուր հայի պարտքն է ուխտագնացություն կատարելու մեր պատմական հայրենիք՝ ներառյալ Տայոց աշխարհ (իմա՝ ներկայիս Թուրքիայի Հանրապետության հյուսիս-արևելյան նահանգներ): Ու եթե հիմնականում թրքաբնակ Արդվին և Օլթի քաղաքներից հայկական պատմամշակութային շերտը գրեթե իսպառ վերացել է, ապա այլ է դրությունն անտառածածկ Թորթումի կիրճում, ուր վեր են հառնում Օշկվանքի Ս. Հովհաննես Մկրտիչ, Խախուի և Իշխանի Ս. Աստվածածին եկեղեցիները:

Միջնադարյան այս վանական համալիրների պատերը դեռ պահպանել են Մամիկոնյան և Բագրատունի իշխանների շունչն ու ոգին, առաքելական և քաղկեդոնական կղերականների պայքարն ու անցյալի և ներկայի համադրումը: Ու թեև քաղաքական որոշակի նկատառումներից ելնելով Տայքն ընկալվում է իբրև վրացական պատմական տարածք (Տաո), այնուամենայնիվ այստեղի հայկական շերտն անուրանալի է և մնայուն:

Բանալի բառեր և արտահայտություններ. Արևմտյան Հայաստան, Տայք, Թորթումի կիրճ, Իշխան, Օշկվանք, քաղկեդոնականներ, վրացական նկրտումներ:

Ներածություն

Ինչպես յուրաքանչյուր հրեա պետք է իր կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ այցելի Երուսաղեմ, յուրաքանչյուր մահմեդական՝ Մեքքա, այնպես էլ ամեն հայ պարտավոր է լինել Արևմտյան Հայաստանում՝ տեսնել, արժևորել ու գնահատել այն ամենը, ինչ ունեցել ենք և կորցրել, ինչ արարել ենք և ի հեճուկս ճակատագրի՝ անհատույց թողել օտարին ու հեռացել:

Հայ ժողովուրդը երբեմնի բովանդակ Հայաստանի միայն մեկ տասներորդ մասի վրա է շարունակում ապրել և արարել՝ սահմանա-փակվելով միայն Հայաստանի, Արցախի ու Վրաստանի Հանրապետու-թյունների սահմաններում, իսկ Հայկական լեռնաշխարհի մնացյալ

հատվածներում հայերի երբեմնի գոյության լուռ վկաներն են միայն կիսավեր պատմամշակութային կոթողներն ու խոնարհված օջախները:

Այդ համատեքստում առաջնային ենք համարում իբրև գիտական նորույթ՝ հայրենաճանաչությանն ու հայրենասիրությանը միտված պատմամշակութային կոթողների մասնագիտական ներկայացման ուխտագնացություններն ու պլեներային պատկերագրությունները, որոնց շնորհիվ էապես կզարգանա հայորդիների շրջանում գեղարվեստական ընկալունակության ձևավորումն ու հայրենատիրության վեհ առաքինությունը՝ ինչն ունի նաև ռազմավարական նշանակություն:

Արևմտյան Հայաստանի մի չնաշխարհիկ և դեռ ոչ լիարժեք ուսումնասիրված վայր է պատմական Հայաստանի Տայք աշխարհը (Խորագույն Հայք)[1]: Հոդվածի խնդիրը հայրենաճանաչ և հայրենատեր գիտակից քաղաքացու ձևավորումն է, իսկ նպատակը՝ Արևմտյան Հայաստանի առավել հեռավոր շրջաններ ուխտագնացությունների կատարումը, որով էապես կկանխվեն նաև հարևան ժողովուրդների կողմից տվյալ կոթողների նկատմամբ սին հավակնությունները:

Մեթոդաբանություն

Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս առկա են հայոց հնամենի մի շարք կոթողային շինություններ, որոնց պատշաճ ներկայացումը դաստիարակչական և զարգացնող առաջնահերթ արժեքներից զատ՝ կձևավորի նաև հայրենիքի հանդեպ ճանաչողության մակարդակ ու կամրապնդի կոթողների պահպանության հիմնախնդիրը: Այդ ամենի կիրառումը պետք է իրականացվի ուխտագնացությունների գործընթացում առաջնային խնդիրների լուծման, ստուգման և հաստատման նպատակով գործածվող՝ տեսական, փորձարարական, հետազոտական մեթոդների ներգրավմամբ:

Թեմայի արդիականությունը գալիս է աշխարհով մեկ սփռված մեր հայրենակիցների կողմից մեկ ընդհանուր նպատակի շուրջ համախմբմամբ, այն է՝ պահանջատեր լինել կորուսյալ հայրենիքին և հնարավորության դեպքում այցելելու և տեղում ուսումնասիրելու երբեմնի անձեռակերտ կոթողների բեկորները:

***

Զբոսաշրջային ուղևորությունն Արևմտյան Հայաստան ինքնին կարելի է համարել սրբազան մի ուխտագնացություն՝ մեր պապերի վաղեմի

[1] *Տայք աշխարհը համընկնում է ներկայիս Թուրքիայի Հանրապետության հյուսիս-արևելյան նահանգներին:*

երազանքի մասնակի կատարում, էրգրից մի բուռ հող ու ջուր բերելով նրանց շիրիմներին ամփոփում՝ փոքրիկ դարման մեծ ցավին: Շատ տարագիր հայերի սերունդներ, հատկապես վերջին աղետալի պատերազմից հետո, օր առաջ ցանկանում են տեսնել երբեմնի կորուսյալ հայրենիքը, որի մի զգալի հատվածն այսօր գտնվում է Թուրքիայի Հանրապետության օկուպացիայի տակ:

Քաղաքական նկատառումներով հայ-թուրքական սահմանի փակ լինելու պատճառով՝ դեպի Տայոց աշխարհ ուխտագնացությունը՝ Մարգարայով կամ Գյումրիով անցնելու փոխարեն, հատում է հայ-վրացական անցակետն ու մտնում Ջավախքի տարածաշրջան: Անցնելով հայաբնակ շեների միջով ու հատելով վերջին բնակավայրը՝ մոտենում ենք վրաց-թուրքական սահմանային պետական Վալե անցակետին, որն այն կողմից կապվում է Թյուրքգյոզու ավանի հետ[2]: Այստեղից ոլորապտույտ ճանապարհը մեզ տանում է դեպի կորուսյալ հայրենիքի 14-րդ աշխարհը:

Տայքը՝ նախկին տայոխների երկիրը, հնուց ի վեր բնակեցված է եղել հայալեզու էթնիկական խմբերով և մշտապես եղել է հայկական պետականության մի մասնիկը[3]: Այն հիշատակվում էր դեռևս ասորեստանյան սեպագիր արձանագրություններում, իսկ արդեն որպես ձևավորված մեկ միասնական հայկական վարչական միավոր՝ 7-րդ դարում այն ընդգրկվել էր Ա. Շիրակացու «Աշխարհացույցում»: Այդ ժամանակաշրջանում Տայքը դեռևս պատկանում էր Մամիկոնյան իշխաններին, սակայն Հայոց մեծ ապստամբության պարտությունից հետո (774-775 թթ.) սպարապետական տան ներկայացուցիչներին այս տարածքներում փոխարինելու էին եկել Բագրատունիները, որոնց կառավարման շրջանում էլ բուռն վերելք էր ապրել եկեղեցաշինարարությունն ու մշակույթը:

Տայոց աշխարհի ոչ պաշտոնական կենտրոնը կարելի է համարել Արդվին քաղաքը, որի անկրկնելի բնությունն անտառապատ է և ամբողջապես թաղված է կանաչի մեջ: Երբ վերջանում է այդքան երկար ճանապարհն ուղեկցող կիրճը, հեռվում երևում է լեռան ստորոտում՝ փռված քաղաքը, որը Ճորոխ գետի ափով ձգվում է ավելի քան 5 կմ: Այստեղի տները դրսից և ներսից սպիտակ են, կղմինդրածածկ: Արդվինում չկան հարթ ճանապարհներ՝ բոլորը կամ բարձրանում են, կամ էլ իջնում: Երբ մոտենում ես քաղաքին, ճանապարհը սկսում է պտտվել: Այն նախ շրջապտույտներով

---

[2] *Արևմտյան Հայաստան կարելի է մուտք գործել նաև Կարծախ-Աքթաշ անցակետով՝ համապատասխան հակահամաճարակային կանոնների պահպանման պայմանով:*

[3] Арутюнян Б., К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII-IV вв. до н.э., ՊԲՀ, 1998, 1-2, էջ 233-246:

իջնում է ներքև, ապա մոտենում է լեռանը: 25 000-ից ավել բնակչությամբ քաղաքում ապրում են հիմնականում թուրքեր, կան նաև լազեր և նախկին ԽՍՀՄ-ից գաղթած ադրբեջանցիներ: Ընդգծենք, որ տեղացիներից շատերը բռնի իսլամ ընդունած հայեր են, որոնք իրենց նիստ ու կացում դեռևս պահպանել են որոշակի հայկական տարրեր:

Ներկայիս քաղաքը ոչ մի աղերս չունի հին հայկական Արդվինի հետ: 9-11-րդ դարերում այն իր արվարձաններով հանդերձ մտնում էր Կղարջքի Բագրատունյաց իշխանության կազմում, իսկ 11-րդ դարից՝ վրաց Բագրատունիների տիրապետության մասն էր: Այս ժամանակաշրջանից՝ Ճորոխ գետի ափին պահպանվել են հին կամուրջն ու Թամար թագուհուն վերագրվող միջնադարյան բերդի ավերակները[4]: Զաքարյանների իշխանապետությունից հետո Արդվինը գրավել և ավերել էին մոնղոլ-թաթարները, իսկ 1555 թվականից այն անցել էր Օսմանյան կայսրության կազմի մեջ: 1878 թվականի Բեռլինի դաշնագրով այս տարածքները միացվել էին Ռուսական կայսրությանը՝ Բաթումի մարզի կազմում:

Քաղաքը 20-րդ դարի սկզբին ուներ շուրջ 8000 բնակիչ, որից մոտ 6000-ը՝ հայեր էին, որոնք հիմնականում զբաղվում էին գյուղա-տնտեսությամբ: Քաղաքի ներքին առևտուրը մանրածախ էր և կենտրոնացած միակ շուկա-հրապարակում, որտեղ կային մի քանի տասնյակ կրպակներ ու արհեստանոցներ: Արդվինում գործում էին 5 եկեղեցիներ, որոնց կից կային դպրոցներ, բացի այդ քաղաքում գործում էր նաև մի վարժարան՝ շուրջ 100 սաներով: Ցավոք, առաջին աշխարհամարտի սկզբին թուրքական զինուժը գրավել և ոչնչացրել էր տեղի ողջ բնակչությանը: Ավելի ուշ ռուսական զորքերն ազատագրել էին Արդվինն ու ընթացել առաջ, սակայն բոլշևիկյան հեղաշրջումից հետո այն անցել էր վրաց մենշևիներին, իսկ 1921 թվականի Մոսկվայի, ապա նաև Կարսի անօրինական պայմանագրերով ի վերջո կցվել էր Քեմալական Թուրքիային:

Արդվինից հարավ կա մի հրաշագեղ պատմամշակութային հուշարձան, որտեղ Արշակունիների հարստության շրջանում տեղակայված էր արքունի զորաբանակը: Անգամ ավերված վիճակով առանձնահատուկ շքեղություն ունի Բանակի տաճարը, որն ըստ Հակոբ Կարնեցու՝ 7-րդ դարի կառույց է. «Եւ կայ ի մէջ ձորոյն մեծամեծ վանորայք, որ յար եւ նման թե լինի միայն սուրբ Սոփի ի Կոստանդինուպօլիս»[5]: Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի օրոք կառուցված սույն տաճարը զվարթնոցատիպ էր, որը վերանորոգվել էր

[4] Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., 1987, էջ 58:

[5] Կարնեցի Յ., Տեղագիր Վերին հայոց, յիշատակարան ԺԷ դարու, խմբ. Կոստանեանց Կ., Վաղարշապատ, 1903, էջ 17:

9-րդ դարում Կյուրիկե Բանակցու կողմից: Երբեմնի եռահարկ՝ դեպի վեր աստիճանաբար պակասող տրամագծերով եռագլան ծավալներով կառուցված կենտրոնագմբեթ հորինվածքով սույն վանքի նկատմամբ ժամանակն ու պատերազմներն անողոք էին գտնվել և այսօր այն կանգնած է վերացման եզրին:

Բանակի տաճարի ավերակների մոտով է հոսում Ճորոխի վտակ Օլթի գետը, որն անցնում է նաև համանուն քաղաքի մեջով: Երբեմնի հայաբնակ Ողթիքը (Ուխտյաց քաղաք) Տայքի Բագրատունյաց կյուրապաղատության կենտրոնն էր: Տարաբնույթ ասպատակությունների ու պատերազմների արդյունքում այն մերթ ամայանում էր, մերթ շենանում: 20-րդ դարասկզբին, երբ ներառված էր Ռուսական կայսրության կազմում՝ տեղի բնակչությունն անցնում էր 3 000-ը: Այս շրջանում քաղաքը բարեկարգվել էր և ընդարձակվել, տեղական հոգևոր շինություններից զատ կառուցվել էր նաև ռուս ուղղափառ եկեղեցին, որը կանգուն է առ այսօր:

Օլթին իրոք որ հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով: Այստեղ են գտնվում դեռևս Բագրատունիների շրջանում կառուցված հանրահայտ միջնաբերդը, Ս. Տիրամոր եկեղեցու մնացորդները, ինչպես նաև միջնադարյան միաթռիչք կամուրջն ու մի քանի վանական համալիրների ավերակներ: Ընդգծենք, որ բացի թուրքական գործոնից, Արդվինի, Արդահանի, այնպես էլ Օլթիի կոթողային հուշարձանների ու ընդհանուր տարածքների պատկանելիության հարցը հատկապես 1918 թվականի Անդրկովկասյան հանրապետությունների անկախացումից հետո առավել ակտիվորեն վիճարկման առարկա էր հանդիսացել նաև հայերի ու վրացիների կողմից:

Ուղևորվելով արևմուտք՝ մեր առջև է բացվում Թորթումի կիրճի աննկարագրելի տեսարանը, որտեղ գտնվում է Տայոց աշխարհի «Սուրբ Երրորդությունը»: Վանական համալիրներից առաջինը գտնվում է Բաղբաշը գյուղի մոտ: Այն 868 թվականին կառուցված՝ խաչաձև հիմքով և կենտրոնագմբեթ կառուցվածքով Խախուի Սուրբ Մարիամ Աստվածածինն է, որը հայ ճարտարապետության դասական նմուշներից է: Ընդհանրապես ճարտարապետական ձևի պարզության և հատակագծային անպաճույճ կազմության շնորհիվ այն անմիջական տպավորություն է թողնում: Եկեղեցու մուտքի մոտ կերտված է Սուրբ Գրիգոր Լուսավորչի քանդակը՝ «Գ» տառի հետ, իսկ հարավային բաց սյունասրահի ճակատի պատին՝ Աստվածամոր քանդակը մինչև ծնկները՝ մանուկը ձեռքերի վրա, նրա երկու կողմերում հրեշտակներն են իրենց ողջ հասակով: Այս քանդակի վերաբերյալ, 1916 թվականին, մի ականատես ռուս սպա նշում էր հետևյալը. «…Աստվածամոր այդ պատկերը շատ հարգի էր տեղի թրքուհիների մոտ, նրան պաշտում էին, չբերության և այլ դժբախտ դեպքերի ժամանակ գալիս,

նրանից օգնություն էին հայցում, զոհ մատուցում և այլն»[6]: 17-րդ դարի կղերական աշխարհագրագետ Հակոբ Կարնեցին իր աշխատություններից մեկում նշում էր, որ Խախուի բնակչության մի մասը հայեր էին, մյուսը՝ վրացիներ, որոնք ևս հայի լեզվով կխոսեին:

Ճանապարհը ձգվում է երկար, խորը ձորի միջով, սակայն չի ձանձրացնում: Անընդհատ փոփոխվող բնապատկերները լողում են մեր աչքերի առջևով: Մոտենում ենք Չամլըյամաչ (Աշունք) գյուղին, որի հարևանությամբ է գտնվում Օշկվանքը. «Վանքը Օշկին է պատկանում. գեղից երկու կիլոմետր հեռու է և իր ճարտարապետությամբ առաջին տեղն է բռնում ամբողջ Տայոց աշխարհում, որը յոթ հրաշալիքներից մեկն է և ամենանշանավորը»[7]: Այն կառուցվել էր գետի ձախ ափին, հարթեցված բարձրադիր վայրում, որտեղից գեղեցիկ տեսարան է բացվում դեպի հարակից հովտի համայնապատկերը:

9-րդ դարի կեսերին թվագրվող այս կառույցը սկզբնական շրջանում հայ առաքելական դավանանքի աղոթատեղի էր: Հարակից Կղարջքի քաղկեդոն հոգևորականների և իշխանականների ճնշումները բարդ կացություն էին առաջացրել տեղի ոչ դավանակիցների հանդեպ: Այդ ժամանակներից էլ սկսվել էր վանքի քաղկեդոնացման գործընթացը[8]: Լինելով տարածաշրջանի ամենամեծ խաչաձև գմբեթավոր եկեղեցին՝ այն Տայքի հայ քաղկեդոնական համայնքի գլխավոր կենտրոնն էր դարձել, որտեղ ծիսական արարողություններն ըստ Պետրիցիոնի կանոնագրքի կատարվում էին հիմնականում վրացերեն[9]. «Քանի որ հայ քաղկեդոնական համայնքի եկեղեցիներում, իր ժամանակի սահմանված կանոնով, արարողությունը կատարվում էր վրացերեն, դրանից ելնելով էլ այդ նույն եկեղեցիների պատերին գրանցվող արձանագրությունները կատարվում էին վրացերենով»[10]: Հետայսու վրացականացվելու էին ոչ միայն տեղի կոթողային հուշարձաններն ու բնակավայրերը, այլև հենց բուն երկրամասը՝

---

[6] Եղիազարյան Ա., Հայ բագրատունիների տերությունը (885-908 թթ.): Պատմաաշխարհագրական ուսումնասիրություն, Ե., 2011 էջ 111-112:

[7] Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, էջ 171:

[8] Арутюнова-Фиданян В., Повествование о делах армянских (VII век) Источник и время, Москва,
2004, с. 183:

[9] Մարության Տ., Հայ դասական ճարտարապետության ակունքներում, Ե., 2003, էջ 244-245:

[10] Ակոպով Ա., Տայքյան հուշարձանների «պատկանելության» հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, հ. 17, 2014, Ե., էջ 74:

ստանալով Տաո անվանումը[11]: Ուստի պատահական չէր, որ երկրորդ աշխարհամարտի ավարտի մոտալուտին, երբ հարց էր բարձրացվել Թուրքիայի արևելյան հողերի նկատմամբ ԽՍՀՄ հավակնությունների վերաբերյալ, ընդարձակ մի զեկույցով վրացական ղեկավարությունը ներկայացրել էր վերոնշյալ կոթողային հուշարձանների նկատմամբ իր «պատմական» հավակնությունները. «Բնութագրական է, որ «յուրահատուկ վրացական ճարտարապետության փայլուն հուշարձանների» շարքում հիշատակվում էին (վրացական տառադարձությամբ) 12 հոգևոր կառույցներ, որոնցից 5-ը Տայքում էին (Բանակ, Խախու, Օշկ, Իշխան, Փանասկերտ), Շատբերդն էլ հայկական եկեղեցիներ ունեցող ամրոց-բնակավայր էր Կղարջքում[12]:

Օշկվանքի համալիրն ընդգրկում էր եկեղեցին, սեղանատունը և մատենագրության վայրը: Գլխավոր եկեղեցին (Ս. Հովհաննես Մկրտիչ) կառուցվել էր 963-973 թվականներին իշխանաց իշխան Բագրատի և Մեծ կյուրապաղատ Դավթի կողմից՝ Գրիգոր Օշկեցու ղեկավարությամբ: Շինության բաց սյունասրահի վերջին սյան ութ քանդակազարդ նիստերից մեկի վրա, ծնկաչոք աղոթող ճարտարապետի քանդակի մոտ կարմիր ներկով մակագրված է՝ «Քրիստոս օգնիր քո ճորտ Գրիգոլին»: Տաճարի պատերը դրսից երեսպատած են դեղնակարմիր գույնի սրբատաշ քարով, կանոնավոր շարքերով, ներսից՝ համեմատաբար փոքրաչափ քարերով ու շաղախի լայն կարերով: Օշկվանքը հարուստ է նաև զարդաքանդակներով: 40 մ բարձրությամբ շինությունն աչքի է ընկնում իր վեհությամբ և սլացիկությամբ: Վանական համալիրն իր ծիսակարգային նշանակությունը պահպանել էր մինչև 15–րդ դարի վերջը:

Մենք գնում ենք Թորթումի անտառածածկ ձորահովտի նեղ ճանապարհով, որին կից ցուցանակները հուշում են հարակից հարուստ պատմական հուշարձանների առկայության մասին: Անցնում ենք Իշխանանիստի ձորով, ուր գտնվում էր Մամիկոնյանների երբեմնի ավանը: Մոտենում ենք Իշխանի Սուրբ Աստվածածին եկեղեցուն, որը հառնում է մեր դիմաց իր ողջ վեհությամբ, կատարելությամբ և նրբագեղությամբ:

Իշխանի Ս. Աստվածածինը կառուցվել էր 7-րդ դարում Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի կողմից: Արաբական արշավանքների պատճառով

---

[11] Տե՛ս, Նազարյան Լ., «Տայք» անվանումն ըստ բյուզանդական աղբյուրների, Պատմական Տայք. պատմություն, մշակույթ, դավանանք: Հոդվածների ժողովածու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2019, էջ 120 – 131:

[12] Մարության Հ., Տայքի ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը եվ խորհրդային գրաքննությունը, Բանբեր Մատենադարանի, №23, Ե., 2016, էջ 119:

ավերված եկեղեցին վերականգնվել էր 9-րդ դարում Սաբան Իշխանցու կողմից և վերաօծվել քաղկեդոնական ծեսով: Մի հետաքրքիր պատմություն կա այդ դեպքերի մասին, ըստ որի Իշխանի լքված վանքը Կղարջքի կյուրապաղատության քաղկեդոն հոգևոր առաջնորդ Գրիգոր Խանձթեցին ու նրա մորաքրոջ որդի Սաբանը (Սավվա) տեսել էին Կոստանդնուպոլսից վերադարձի ճանապարհին՝ 826 թվականին: Կղարջքի Խանձթա մայրավանք այցից հետո Գրիգորը մնացել էր այնտեղ, իսկ Սաբան վերադարձել էր Իշխան: Շուտով Գրիգոր Խանձթեցին պատմել էր Սաբանի մասին Կղարջքի Բագրատ կյուրապաղատին, ով վերջինիս հրավիրել էր իր մոտ, սակայն Սաբանը մերժել էր այդ հրավերը, քանի որ Տայքը Հայ Բագրատունիների տիրույթում էր գտնվում: Բայց երբ նա հրավեր էր ստացել արդեն Գրիգորի կողմից, հոժարակամ համաձայնել էր, որովհետև քաղկեդոնական էր և ընդունում էր նրա հոգևոր իշխանությունը: Այդ դեպքերից հետո Իշխանի վերականգնված եկեղեցի էին այցելել Գրիգոր Խանձթեցին և Կղարջքի Բագրատ կյուրապաղատը: Ավելի ուշ Սաբանը դարձել էր Իշխանի եպիսկոպոս: Որոշ վրացի ուսումնասիրողների կարծիքով սկզբնական շրջանում այդ շինությունը եղել էր զվարթնոցատիպ և հետագա վերականգման ժամանակ նոր դարձել խաչաձև հիմքով կառույց[13]:

Այդ վարկածը, սակայն վերջին ժամանակաշրջանի ուսումնասիրությունների արդյունքում հիմնովին հերքվել է: Վերանորոգված եկեղեցու արձանագրությունները վրացատառ են, որոնց կողքին մենք հանդիպում ենք նաև հայատառ թվագրումներ, որոնք վկայում են գյուղի բնակչության հայկական լինելու մասին: Եկեղեցին զարդարող գայլերի, արծիվների և վայրի խոզերի քանդակները բարձր արվեստի մարմնացում են: Առանձնակի ուշադրության է արժանի կոթողի լուսամուտների շրջանակներին, կամարաղեղներին, քիվերին, սյուներին և որմնասյուների խոյակներին կերտված գալարաձև երկտեսակ ականթների կազմությունը[14]: Վերջինս Ն. Տոկարսկին անվանում էր կիսագլանաձև ակոսների շարք, որոնց ստորին հատվածները նման են պտերանման տերևների[15]:

---

[13] Տե՛ս, Амиранашвили Ш., История грузинского искусства, Москва, 1963.

[14] Սարյան Ա., Արմավենու և ականթի զարդաքանդակները Տայքի հուշարձաններում և դրանց վաղմիջնադարյան և համաժամանակյա զուգահեռները, Բանբեր Մատենադարանի, №24, Ե., 2017, էջ 51:

[15] Токарский Н., Из истории средневекового страительства в Тайкском княжестве, Е., 1988, с. 20.

Եկեղեցին ներսից ևս տպավորիչ տեսք ունի: Պատերին պահպանվել են հին որմնանարների որոշ հատվածներ, իսկ այն ինչ պահպանվել է վերևում, կատարելության կենդանի վկան է. «…արևելյան խորանի գմբեթարդ ծածկի ձախակողմում եղած մեդալիոններից մեկի վրա …Տրդատ թագավորի կնոջ՝ Աշխավնարի (Աշխենի) պատկերն է դրոշմված, ուր առկա են նաև հայկական գրերի դրվագներ, մեդալիոններից մյուսի վրա, …Վրաստանում Ս. Նունեից առաջին քրիստոնեություն ընդունող Նանայի (Միհրան թագավորի կնոջ) պատկերն է, վրացերեն գրերի մնացորդներով…»[16]:

Ս. Աստվածածինը մի ժամանակ անգամ վերածել էին մզկիթի, սակայն վերջերս այն վերանորոգվել է, ամրացվել են գմբեթն ու պատերի մի մասը և այժմ գործածվում է որպես վրացադավան եկեղեցի:

Թորթումի հովտի այս վանական համալիրները կոմպոզիցիոն հորինվածքով ունեն մի շարք ընդհանրություններ, որոնք լրացնելով մեկը մյուսին կազմում են Տայքի միջնադարյան ճարտարապետական դպրոցի ամբողջական պատկերը: Հարկ է ավելացնենք, որ այս եկեղեցիները, համաձայն թուրք-վրացական 2012 թվականի մշակութային ժառանգության վերականգնման վերաբերյալ միջպետական համաձայնագրի, ճանաչվել են վրացական և թուրքական իշխանությունների կողմից պարտավորություն է ձեռք բերվել վրաց մասնագետների հետ համատեղ վերականգնելու տվյալ վանական համալիրները: Փաստացի՝ բուն հայկական ճարտարապետական հուշարձանների պատմությունը խեղաթյուրվել է և այսուհետ ներկայացվելու է որպես հին վրացական ուղղափառ կառույցներ:

Թորթումի կիրճում բնության հրաշքն է համարվում համանուն ջրվեժն ու լիճը, որի հատակին դեռ պահպանվում են ավերակ ամրոցի հետքերը: Կիրճից վեր՝ տեղի ժայռոտ լեռներում վեր ծվարած են հայտնի տայքյան վիշապաքարերը, որոնց առկայությունը տվյալ շրջանում ևս մեկ ակնառու ապացույցն է հանդիսանում տեղում հայության, որպես բնիկ ժողովրդի մի քանի հազարամյա պատմության եղելության:

Հայկական Տայքից թերևս այսքանը ընդհանրական ուխտագնացության համատեքստում: Հեռանալով պատմական Տայքից հասկանում ենք, որ այն, ինչը տեսանք և զգացինք այս կարճ ուխտագնացության ընթացքում լոկ մի ակնթարթ է այն դարավոր կսկիծի, որ պահում է իր մեջ բռնակցված մեր մայր հայրենիքը: Վերադառնում ենք տուն՝ թողնելով օտարականին մեր մյուս տունը: Ահա այստեղ է իրեն զգացնել տալիս կորուսյալ հայրենիքի իրական արժեքը: Մեր կորուստն անգին է և անփոխարինելի, սակայն քանի

[16] Մարության Տ., Խորագույն Հայք, Ե., 1978 էջ 32:

դեռ ամուր է մեր հավատը, քանի դեռ հիշում ենք, որ այդ ամենը մերն է եղել, օտարներն էլ դա ի նկատի կառնեն այնքան ժամանակ, որքան մենք ինքներս չենք մոռանա:

Եզրակացություններ

Այսպիսով, համապարփակ ուսումնասիրելով Տայոց աշխարհի կոթողների պատմական ընթացքն ու արդի վիճակը, հանգեցինք ներքոթվարկյալ եզրահանգումների՝

1. Թուրքիայի ներկայիս պատկան մարմինները համապատասխան մասնագետների ներգրավմամբ համագործակցելով իրենց վրացի գործընկերների հետ՝ վերականգնում են Տայքի հայկական կոթողային մի քանի նշանավոր հուշարձանները՝ քաղքեդոնական կանոնին համապատասխան:
2. Երբեմնի հայոց հուշարձանները ներկայացվում են իբրև վրացական ժառանգություն՝ վերականգնման քողի ներքո վերացնելով հայեցի իսկությունն ապացուցող արձանագրային հատվածները:
3. Որոշ կոթողները ենթարկվել են վանդալիզմի և պատշաճ ուշադրության չարժանանալու պարագայում տարիներ անց շատ այլ քարեղեն վկայությունների նման կանցնեն պատմության գիրկը:
4. Հայության մի ստվար հատվածի համար դեպի Արևմտյան Հայաստան ուխտագնացությունները սահմանափակվում են միայն կենտրոնական հատվածներ շրջայցով՝ հիմնականում աչքաթող անելով հայկական Տայքը:

Վերոնշյալից ելնելով գտնում ենք, որ հայրենաճանաչ և հայրենատեր քաղաքացու ձևավորման կարևորագույն պայմանը շարունակում է լինել կրթված, իր պատմությունն ու կրոնը իմացող և գնահատող անհատը, որի ձևավորման լավագույն միջոցներից մեկը դեպի պատմական հայրենիքի անգամ ամենահեռավոր և հիմնական երթուղիներից հեռու գտնվող հատվածներ ուխտագնացությունն ու ուսումնասիրությունն է: Ուստի կորուսյալ հայրենիքի հատկապես հեռավոր, քիչ լուսաբանվող և վիճարկելի հատվածների ուխտագնացության, հետազոտման և մշտական դիտարկման խնդիրն այժմէական է և պահանջում է կոնկրետ լուծումներ:

Гагик Аветисян

Паломничество В Тайкский Ашхар[24]

Заключение

Ключевые слова и выражения: Западная Армения, Тайк, Тортумское ущелье, Ишхан, Ошкский собор, халкидоны, грузинские притязания.

Таким образом, всесторонне изучив исторический процесс и современное состояние памятников Тайka, мы пришли к следующим выводам.

1. Нынешние компетентные органы Турции, сотрудничая со своими грузинскими коллегами с привлечением соответствующих специалистов, восстанавливают несколько известных армянских монументальных памятников Тайка в соответствии с Халкидонским каноном.
2. Под видом реставрации вырезая фрагменты надписей, подтверждающих армянскую подлинность, исконно армянские памятники преподносятся как грузинское наследие.
3. Некоторые памятники подверглись вандализму и в случае отсутствия должного внимания спустя годы от них даже и следа не останется.
4. Для значительной части армянства паломничества в Западную Армению ограничиваются лишь посещением центральных районов, в основном не обращая внимания на армянский Тайк.

Исходя из вышеизложенного, мы считаем, что важнейшим условием формирования гражданина-патриота продолжает оставаться образованная личность, знающая и ценящая свою историю и религию, одним из лучших способов которого является паломничество и изучение даже самых отдаленных от основных маршрутов мест исторической родины. Поэтому проблема паломничества, исследования и постоянного наблюдения за особо отдаленными, малоизведанными и спорными частями утраченной родины сейчас актуальна и требует конкретных решений.

---

[24] *Ашхар (мир, земля)- административно-территориальная единица Великой Армении.*

Gagik Avetisyan

Pilgrimage in Tayk Ashkharh[25]

Conclusion

Key words and expressions: Western Armenia, Tao, Tortum Gorge, Oshki, Khakhuli Monastery, Ishkani, Chalcedonian clergy, Georgian claims.

Thus, having comprehensively studied the historical process and the current state of the monuments of the Tayk, we came to the following conclusions.

1. The current competent authorities of Turkey, cooperating with their Georgian colleagues with the involvement of relevant specialists, restore several famous Armenian monumental monuments of Tayk in accordance with the Chalcedonian Canon.
2. Under the guise of restoration, by cutting out fragments of inscriptions confirming Armenian authenticity, native Armenian monuments are presented as Georgian heritage.
3. Some monuments have been vandalized and in the absence of proper attention, years later they will not even leave a trace.
4. For a significant part of the Armenians, pilgrimages to Western Armenia are limited only to visiting the central districts, mostly ignoring the Armenian Tayk.

Proceeding from the above, we believe that the most important condition for the formation of a patriot citizen continues to be an educated person who knows and appreciates his history and religion, one of the best ways of which is pilgrimage and exploring even the most remote places of the historical homeland from the main routes. Therefore, the problem of pilgrimage, research and constant monitoring of particularly remote, little-known and disputed parts of the lost homeland is now relevant and requires concrete solutions.

Օգտագործված գրականություն

1. Ակոպով Ա., Տայքյան հուշարձանների «պատկանելության» հարցի շուրջ, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ, հ. 17, 2014, Ե., էջ 74:
2. Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929, էջ 171:

[25] *Ashkharh (country) - Greater Armenia administrative-territorial unit*

3. Եղիազարյան Ա., Հայ բագրատունիների տերությունը (885-908 թթ.): Պատմաաշխարհագրական ուսումնասիրություն, Ե., 2011 էջ 111-112:
4. Կարնեցի Յ., Տեղագիր Վերին հայոց, յիշատակարան ԺԷ դարու, խմբ. Կոստանեանց Կ., Վաղարշապատ, 1903, էջ 17:
5. Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Ե., 1987, էջ 58:
6. Մարության Հ., Տայքի ճարտարապետության պատմության ուսումնասիրությունը եվ խորհրդային գրաքննությունը, Բանբեր Մատենադարանի, № 23, Ե., 2016, էջ 119:
7. Մարության Տ., Խորագույն Հայք, Ե., 1978 էջ 32:
8. Մարության Տ., Հայ դասական ճարտարապետության ակունքներում, Ե., 2003, էջ 244-245:
9. Նազարյան Լ., «Տայք» անվանումն ըստ բյուզանդական աղբյուրների, Պատմական Տայք. պատմություն, մշակույթ, դավանանք: Հոդվածների ժողովածու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2019, էջ 120 – 131:
10. Սարյան Ա., Արմավենու և ականթի զարդաքանդակները Տայքի հուշարձաններում եվ դրանց վաղմիջնադարյան և համաժամանակյա զուգահեռները, Բանբեր Մատենադարանի, №24, Ե., 2017, էջ 51:
11. Амиранашвили Ш., История грузинского искусства, Москва, 1963.
12. Арутюнова-Фиданян В., Повествование о делах армянских (VII век) Источник и время, Москва, 2004, с. 183:
13. Арутюнян Б., К вопросу об этнической принадлежности населения бассейна реки Чорох в VII-IV вв. до н.э., ՊԲՀ, 1998, 1-2, էջ 233-246:
14. Токарский Н., Из истории средневекового страительства в Тайкском княжестве, Е., 1988, с. 20.

Խմբագրություն է ուղարկվել 23.06.2022թ.
Հանձնարարվել է գրախոսության 07.07.2022թ.
Տպագրության է հանձնարարվել 06.12.2022թ.